

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի
Գ.Գաբրիելյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ.Կարապետյանի

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի
տեղակալ

Կ.Իսախանյանի

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Արմավիրի մասնաճյուղի տնօրեն

Ն.Սարգսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017թվականի
սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. ՀՀ Արմավիրի մարզում խոլերա հիվանդության մուտքն ու տարածումը
կանխարգելելու միջոցառումների 2017-2020 թթ. կոմպլեքս պլանի կատարման
ընթացքը:

/Լ.Մուրադյան- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական
եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի
մարման գործընթացը առ 15.09.2017թ դրությամբ:

/Վ.Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

4. ՀՀ պետական բյուջեից ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացված
միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ:

5.Բերքահավաքի կատարման ընթացքը Արմավիրի մարզում:

/Ա.Այվազյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ/

6.Հայտարարություններ

Ա.Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության պետ

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ
Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը
ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգը:

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի
մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 -րդ կետի 13-րդ պարբերությամբ՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

**Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի
2017թվականի սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգը:**

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի
տեղակալ Լ.Մուրադյանը ներկայացրեց մարզում խոլերա հիվանդության մուտքն ու
տարածումը կանխարգելելու 2017-2020 թվականների միջոցառումների կոմպլեքս պլանի
կատարման ընթացքը՝ մասնավորապես նշելով, որ համայնքապետարանները պետք է
վերանայեն և լրամշակեն խոլերայի դեմ պայքարի իրենց միջոցառումների 5-ամյա
պլանը: Նա առաջարկեց համայնքների ղեկավարներին ուշադրության կենտրոնում
պահել ջրամատակարարման և աղբահանության հետ կապված հարցերը՝ հետագա
խնդիրներից խուսափելու համար: Լ.Մուրադյանը նշեց, որ անհրաժեշտ է առավելագույն
ուշադրություն ցուցաբերել կապված շուրջօրյա ջրամատակարարման, ճիշտ
խմելաջրերի օգտագործման, ջրերի վարակազերծման, ջրամբարներում լողալն
արգելելու և նմանատիպ միջոցառումների իրականացման նկատմամբ: Լ.Մուրադյանը
տեղեկացրեց նաև, որ վերը նշված միջոցառումների վերաբերյալ զգուշացվել են նաև
գյուղական բուժամբուլափորիաների ղեկավարները, որոնք իրենց լիազորությունների
շրջանակներում ևս կիրականացնեն համապատասխան աշխատանքներ:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով օրակարգային հարցին նշեց, որ
չնայած ընթացիկ տարում բավականին շոգ էր և ջրի սղության պատճառով կար
որոշակի լարվածություն, այնուամենայնիվ մարզում աղիքային ինֆեկցիաների աճ
չգրանցվեց, որն արդեն իսկ ողջունելի է: Մարզպետը տեղեկացրեց որ <<Մաքուր
Հայաստան>> ծրագրի շրջանակներում իրականացվեցել են աղբահանության

լայնածավալ աշխատանքներ: Մարզի տարածքում եղած 177 աղբավայրերից չեն մաքրվել ընդհամենը 5 աղբավայր, որոնց վերաբերյալ քննարկվում են ծրագրեր:

Նա խոլերա հիվանդության մուտքն ու տարածումը կանխարգելելու կարևոր ձեռնարկ համարեց Մեծամորի մաքրման կայանի կառուցումը, որն էլ իրականացվելու է գերմանական զարգացման բանկի /KFW/, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համատեղ ծրագրերով: Մեծամորի նոր մաքրման կայանի համար համար նախատեսվել է 5,9 մլն եվրո: Նշված կազմակերպությունների ծրագրով էլ առաջիկայում կիրականացվի կապալառու կազմակերպության ընտրության մրցույթը:

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզում սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 15.09.2017թ դրությամբ: Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 1761404,5 հազար դրամի դիմաց կազմել են 1406610,3 հազար դրամ, կատարողականը՝ 79,9 տոկոս:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 0,3 տոկոսով: 6,5 տոկոսով նվազում է գրանցվել միայն գույքահարկի մասով:

Վ. Մկրտչյանը ըստ համայնքների ներկայացրեց սեփական եկամուտների հավաքագրման 100 տոկոս և բարձր, ինչպես նաև՝ 50 տոկոսից ցածր ցուցանիշները/տեղեկատվությունը կցվում է/: Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետը ներկայացրեց նաև համայնքներում աշխատավարձերի մարման գործընթացը՝ տեղեկացնելով, որ 15.09.2017 թվականի դրությամբ աշխատավարձի պարտք ունի թվով 17 համայնք, և այն կազմում է 28715,0 հազար դրամ/տեղեկատվությունը կցվում է/:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը, անդրադառնալով սեփական եկամուտների 50 տոկոսից ցածր և սեփական եկամուտներ չհավաքագրած համայնքների ղեկավարներին առանձին-առանձին, փաստեց, որ շատ համայնքներում ստեղծված իրավիճակը կախված է նաև համայնքների ղեկավարների անգործությունից, որը միանգամայն անընդունելի է:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը մասնավորապես անդրադառնալով ներկայացված տեղեկատվությանը՝ ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման և աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացին՝ ապահովելով համայնքի բյուջեով պլանավորված ցուցանիշների կատարումը և հնարավորն սեղմ ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք կարգավորելու և առավելագույնի հասցնելու:

« Արմավիրի մարզի սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարները պարտավորվեցին առաջիկա մեկ ամսվա ընթացքում անել հնարավորը՝ շոշափելի արդյունքներ արձանագրելու համար:

Օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ Վ.Մկրտչյանն իր ելույթում անդրադարձավ « պետական բյուջեից Արմավիրի մարզպետարանին հատկացված միջոցների նպատակային օգտագործմանը՝ ընդգծելով, որ կրթական բոլոր ծրագրերով, երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների մասով, մշակութային միջոցառումների իրականացման նպատակով և այլընտրանքային ծառայությունների ապահովման համար հատկացված գումարների ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվել է: Նա նշեց, որ թերֆինանսավորում կա « կառավարության պահուստային ֆոնդից հատկացվող միջոցների մասով միայն, որը պայմանավորված է աշխատանքները կատարող կապալառու կազմակերպությունների կողմից կատարողական ակտերի չներկայացմամբ, որոշ դեպքերում էլ՝ դրական եզրակացություն չստացացած պայմանագրերով:

Օրակարգային հինգերորդ հարցով հանդես եկավ « Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը՝ ներկայացնելով մարզում բերքահավաքի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը: Նա մասնավորապես նշեց, որ 2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները կազմել են 35912,5 հեկտար, որը 144,9 հեկտարով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: Ցանքատարածությունների ավելացումը պայմանավորված է եղել եգիպտացորենի, բանջար-բոստանային կուլտուրաների ցանքատարածությունների ավելացմամբ: Ա.Այվազյանը տեղեկացրեց, նաև որ մարզում ավարտվել է հացահատիկի հունձը: Ավարտին է մոտենում կարտոֆիլի, բոստանի բերքահավաքը: Ընթացքի մեջ են բանջարեղենի ,պղոխ, խաղողի բերքահավաքի և կերի կուրակման աշխատանքները: Նա ընդգծեց, որ գյուղատնտեսական մթերքների բերքահավաքի և իրացման հարցը մշտապես գտնվել է « կառավարության և մարզպետի ուշադրության կենտրոնում: Այդ աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով վերամշակող կազմակերպությունների և արտահանող սուբյեկտների հետ կազմակերպվել են մի շարք խորհրդակցություններ և հանդիպումներ: Ա.Այվազյանը տեղեկացրեց նաև, որ հաշվետու ժամանակահատվածի տվյալներով մարզից արտահանվել է 500 տոննա կեռաս, 10 հազար տոննա ծիրան, 7-8 հազար տոննա դեղձ, 5-6 հազար տոննա սալոր, 3-4 հազար տոննա խաղող: Պղոխի և բանջարեղենի մթերման ծավալն էլ շուրջ 90 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Ա.Այվազյանը հանդես եկավ նաև հայտարարությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին գյուղատնտեսական մթերքների ծավալների վերաբերյալ սահմանված տեղեկատվությունը մարզային վիճակագրական վարչություն ներկայացնել սահմանված ժամկետում և հնարավորինս ճիշտ և ռեալ:

« տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ Իսախանյանը հանդես եկավ ելույթով, նշելով որ « Արմավիրի մարզի սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը գտնվում է « տարածքային կառավարման և զարգացման նախարարի մշտական հսկողության և ուշադրության կենտրոնում և

առաջարկեց համայնքների ղեկավարներին մինչև փարեվերջ կարգավորել դրանց գործընթացը: Կ.Իսախանյանը անդրադարձավ նաև աղբահանության խնդրին առաջարկելով առավել հեղուկական և ուշադիր լինել նաև համայնաքներում աղբահանության իրականացմանը:

Անդրադառնալով օրակարգային հարցերին և հնչեցրած խնդիրներին մարզպետ Ա.Ղահրամանյանը հորդորեց և առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ բոլոր քննարկվող օրակարգային հարցերի առընչությամբ փանել նորմալ աշխատանքներ և լինել առավել հեղուկական:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ



Արձ.՝ Մ.Առուշանյան